



# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԽՐԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

Այս և պատվաստման վերաբերյալ այլ ՀՏՀ-ների փաստաթղթերն առցանց տեսնելու համար այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման կայքէջ](#):

## Ո՞ւմ են խորհուրդ տրվում COVID-19-ի դեմ խթանիչ դեղաչափերը

COVID-19-ի դեմ լավագույն պաշտպանության համար CDC-ն հորդորում է, որ 5 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձինք *պետք է* ստանան մեկ խթանիչ դեղաչափ: Բացի այդ, որոշ մարդիկ պետք է ստանան 2-րդ խթանիչ դեղաչափ: (Տե՛ս ստորև [Ո՞վ կարող է ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափ](#)):

COVID-19-ի դեմ պատվաստանյութի խթանիչ դեղաչափը ստանալը կարևոր է, քանի որ այն ամրապնդում է ձեր դիմադրողականությունը: Այն ձեզ համար ապահովում է ավելի լավ պաշտպանություն ծանր հիվանդանալուց, հիվանդանոցում հայտնվելուց և նույնիսկ մահանալուց:

Իմացեք ավելին CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութերի խթանիչ Դեղաչափեր](#) կայքէջում:

## Ե՞րբ են ես իրավասու ստանալ խթանիչ դեղաչափ

Եթե դուք 5 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, դուք իրավասու եք ստանալ խթանիչ դեղաչափ՝

- Ձեր Moderna կամ Pfizer հիմնական պատվաստանյութի շարքի վերջին դեղաչափից 5 ամիս անց, կամ
- Johnson & Johnson (J&J) պատվաստանյութի միակ դեղաչափից 2 ամիս անց:

Եթե դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, խթանիչ դեղաչափը կարող է լինել COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ, սակայն նախընտրելի են Pfizer կամ Moderna պատվաստանյութերը: 12-17 տարեկան երեխաները կարող են ստանալ միայն Pfizer պատվաստանյութի խթանիչ դեղաչափը:

Եթե դուք ունեք միջին կամ խիստ իմունային անբավարարություն, դուք պետք է ավելի շուտ ստանաք ձեր խթանիչ դեղաչափը: Ավելին իմանալու համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումը Միջին Կամ խիստ Իմունային Անբավարարություն Ունեցող Մարդկանց Համար](#) կայքէջը:

**Եթե դուք դեռ չեք ստացել ձեր առաջին խթանիչ դեղաչափը ժամանակին, ապա այժմ ժամանակն է ստանալ ձեր խթանիչ դեղաչափը:**

Այցելեք CDC-ի՝ [Ձեր COVID-19-ի խթանիչ Դեղաչափը Ստանալը](#) ինտերակտիվ էջ, որը կօգնի պարզել՝ արդյոք դուք (կամ ձեր երեխան) կարող եք ստանալ COVID-19-ի մեկ կամ մի քանի խթանիչ դեղաչափեր:

Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ:

## Ո՞վ կարող է ստանալ երկրորդ խթանիչ դեղաչափ

Հետևյալ մարդիկ կարող են ստանալ COVID-19-ի դեմ 2-րդ խթանիչ դեղաչափը, *եթե անցել է*





# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԽՐԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

առնվազն 4 ամիս 1-ին խթանիչ դեղաչափը ստանալուց հետո: Նրանք են՝

- 50 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք
- 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք, որոնք ունեն [միջին կամ խիստ իմունային անբավարարություն](#)
- 18-49 տարեկան անձինք, ովքեր ստացել են իրենց J&J պատվաստանյութի հիմնական և խթանիչ դեղաչափերը

Եթե դուք 50 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, կամ եթե 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, որն ունի [միջին կամ խիստ իմունային անբավարարություն](#) (և ձեր առաջին խթանիչ դեղաչափից անցել է 4 ամիս), դուք **պետք է** ստանաք ձեր 2-րդ խթանիչ դեղաչափը հիմա՝ COVID-19-ի դեմ ձեր բոլոր պատվաստանյութերը ժամանակին ստանալու համար: Կարևոր է նշել, որ COVID-19-ով վարակման ցուցանիշներն աճում են, և ծանր հիվանդանալու վտանգը ձեզ համար ավելի մեծ է լինելու, եթե վարակվեք COVID-19-ով:

Եթե դուք 18-49 տարեկան եք և պատվաստվել եք J&J պատվաստանյութով ինչպես ձեր հիմնական, այնպես էլ խթանիչ դեղաչափն ընդունելիս (և ձեր առաջին խթանիչ դեղաչափից անցել է 4 ամիս), դուք **կարող եք** ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափը: Երկրորդ խթանիչ դեղաչափի ընդունումը չի պահանջվում արդիական կարգավիճակ ունենալու՝ բոլոր առաջարկվող պատվաստանյութերը ժամանակին ընդունելու համար: Եթե դուք գտնվում եք COVID-19-ով վարակվելու [ավելի բարձր վտանգի](#) խմբում, ստացեք ձեր 2-րդ խթանիչ դեղաչափը հիմա: Եթե դուք առողջ եք և սահմանափակ շփում ունեք ուրիշների հետ, ապա կարող եք սպասել:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութերի խթանիչ Դեղաչափեր](#) կայքէջը:

Այցելեք CDC-ի՝ [Ձեր COVID-19-ի խթանիչ Դեղաչափը Ստանալը](#) ինտերակտիվ էջ, որը կօգնի պարզել՝ արդյոք դուք (կամ ձեր երեխան) կարող եք ստանալ COVID-19-ի մեկ կամ մի քանի խթանիչ դեղաչափեր:

Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ:

## Ե՞րբ պետք է ստանամ երկրորդ խթանիչ դեղաչափը

Եթե դուք գտնվում եք այն խմբում, ովքեր կարող են ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափ, կարող եք ձեր ցանկությամբ ստանալ այն հենց հիմա կամ սպասել: Հաշվի առեք ձեր առողջական վիճակը և վտանգներն ու օգուտները: Ձեր բժիշկը կարող է օգնել ձեզ դիտարկել ձեր տարբերակները: Այս պահին ձեզ անհրաժեշտ չէ երկրորդ խթանիչ դեղաչափ, որպեսզի ձեր COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակը համարվի [արդիական](#):

Որոշ գործոններ կարող են ավելի հավանական դարձնել COVID-19-ի հետևանքով ձեր ծանր հիվանդանալը: Եթե դուք իրավասու եք ստանալ երկրորդ խթանիչ դեղաչափ, ապա կարող է օգտակար լինել այն ստանալ *հիմա*, եթե դուք (կամ ձեզ հետ ապրող որևէ անձ)՝

- Ունեք միջին կամ խիստ իմունային անբավարարություն
- [Ավելի մեծ հավանականությամբ ծանր կհիվանդանաք COVID-19-ի հետևանքով](#)
- Ավելի մեծ հավանականությամբ կշփվեք COVID-19-ի վարակի հետ ձեր աշխատանքի, ձեր բնակության վայրի կամ այլ գործոնների միջոցով (օրինակ՝ հաճախակի ճանապարհորդելը կամ մեծ հավաքույթների մասնակցելը)





# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԽՁԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

- Գտնվում եք COVID-19-ի փոխանցման զգալի և բարձր մակարդակ ունեցող տարածքում
- Եթե ձեզ հետ ապրող որևէ անձ պատվաստված չէ

Դուք կարող եք *սպասել* նախքան 2-րդ խթանիչ դեղաչափը ստանալը, եթե դուք՝

- Վերջին 3 ամսվա ընթացքում վարակվել եք COVID-19-ով
- Առողջ եք և սահմանափակ շփում ունեք ուրիշների հետ

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութերի խթանիչ Դեղաչափեր](#) կայքէջը: Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ:

## Որո՞նք են խթանիչ դեղաչափի ստանալու վտանգները

Խթանիչ դեղաչափերին հաջորդող ազդեցությունները նման են հիմնական դեղաչափերին հաջորդող ազդեցություններին: Կողմնակի ազդեցություններից շատերը մեղմ և չափավոր են և տևում են 2 օր կամ ավելի քիչ: Ինչպես հիմնական պատվաստանյութերի շարքը ստանալու դեպքում, լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են դրսևորվում: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստման Անվտանգությունը](#) կայքէջ: Խթանիչ դեղաչափի ստանալու առավելությունները գերազանցում են բոլոր հայտնի և հնարավոր վտանգները:

## Արդյո՞ք ես պետք է ներկայացնեմ բժշկի գրություն կամ դեղատոմս խթանիչ դեղաչափի ստանալու համար

Ոչ, ձեզ հարկավոր չէ բժշկի գրություն կամ դեղատոմս խթանիչ դեղաչափի ստանալու համար: Դուք կարող եք ինքնուրույն հաստատել (self-report), եթե իրավասու եք: Երբ գնում եք որևէ հաստատություն, վերցրեք պատվաստման ապացույցը, օրինակ՝ ձեր CDC-ի սպիտակ քարտը կամ պատվաստման թվային քարտը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Հանրային Առողջության Վարչության [Ինչպես պատվաստվել](#) կայքէջը:

## Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս ՀՏՀ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման ՀՏՀ-ները](#) կայքէջը:
- CDC-ի կայքէջ՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութի խթանիչ Դեղաչափեր](#)
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցուցադրում է պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [Ինչպես Պատվաստվել](#):
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ

